

Թիւ 27702
Մարտ 28, 1982

Արժանաշնորհ
Տ. Յուսիկ Բրնյ. Նշանեան
Թորոնթօ.

Սիրելի Տէր Յուսիկ,

Այսու զիրով պաշտօնապէս ձեզ ատմեայ Հոգեւոր Հովիւ կը նշա-
նակենք Թորոնթոյի Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ:

Դուք ձեր այս նոր պաշտօնին պիտի ձեռնարկէք Մարտ 28, 1982էն
սկսեալ:

Այս առթիւ կը փափաքինք մեր գնահատանքը յայտնել ձեզի՝ անցնող
քանի մը տարիներու ընթացքին ձեր ունեցած Եկեղեցականութիւնը զործու-
նէութեան եւ ձեր ցուցաբերած օրինապահ եւ հաւատարիմ ընթացքին հա-
մար:

Վստահ ենք որ Ս. Երրորդութիւն Եկեղեցւոյ ծխական Խորհուրդին
հետ համագործակցաբար եւ նոյն ոգիով պիտի մասակարարէք համայնքի
հոգեւոր կարիքները՝ ի փառս Աստուծոյ եւ ի պայծառութիւն Հայց.
Եկեղեցւոյ:

Կ'աղօթենք որ Տիրոջ օրհնութիւնը անպակաս ըլլայ ձեր եւ ծխական
Խորհուրդին վրայէն՝ եւ Տէրը բոլորդ զօրացնէ ու առաջնորդէ ի զործս
բարիս:

Սիրոյ ողջունիւ

ԹՈՐԳՈՍ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ
Առաջնորդ